7605
27.12.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N27 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով, 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 14-ը դեկտեմբերի 2017 թվականի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, ինչպես նաև Եղեգիս համայնքում ընդգրկված բնակավայրերի նախկին ավագանու՝ «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին,

3. Եղեգիս համայնքի ավագանու 17/11/2017թ. թիվ 26Ն որոշումը նոր խմբագրությամբ շարադրելու մասին,

4. Եղեգիս համայնքի 2017 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,01738 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N28 Ա

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ՝ «ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 79 /յոթանասունինը / հոգուց:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքում ընդգրկված բնակավայրերի նախկին ավագանու որոշումները՝ «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»՝ համաձայն սույն որոշման կից 1 հավելվածի:

3. Հաստատել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից 2 հավելվածի:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ սույն որոշմամբ հաստատված հաստիքացուցակին համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից, բացառությամբ 4-րդ կետի, որն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա ժամանակավորապես չի մասնակցում է

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 14-ի N 28-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 79 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
1	Համայնքի ղեկավար	1	400000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	280000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ (Շատին)	1	180000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	250000
5	Աղնջաձոր բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
6	Արտաբույնք բնակավայրի վարչական ղեկավար	1	180000
7	Գողթանիկ բնակավայրի վարչական ղեկավար	1	130000
8	Եղեգիս բնակավայրի վարչական ղեկավար	1	160000
9	Թառաթումբ բնակավայրի վարչական ղեկավար	1	160000
10	Հերմոն բնակավայրի վարչական ղեկավար	1	160000
11	Հորբատեղ բնակավայրի վարչական ղեկավար	1	130000
12	Հորս բնակավայրի վարչական ղեկավար	1	160000
13	Սալլի բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
14	Վարդահովիտ բնակավայրի վարչական ղեկավար	1	160000
15	Քարագլուխ բնակավայրի վարչական ղեկավար	1	180000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
16	Աշխատակազմի քարտուղար	1	280000
	Ֆինանսական բաժին		
17	Բաժնի պետ	1	250000
18	Բաժնի գլխավոր մասնագետ	1	180000
19	Բաժնի գլխավոր մասնագետ	1	180000
20	Բաժնի առաջին կարգի մասնագետ	1	130000
21	Բաժնի առաջին կարգի մասնագետ	1	130000
	Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)		
22	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	150000
23	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	150000

24	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	150000
25	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	130000
26	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	130000
27	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	130000
28	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	130000
29	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	130000
30	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
31	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
32	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
33	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
34	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
35	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
36	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
37	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
38	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
39	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000

40	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	90000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ			
41	Մշակութային միջոցառումների կազմակերպիչ և գրադարանավար	4.9	80000
42	Գրադարանավար	0.9	80000
43	Անասնաբույժ	1	100000
44	Անասնաբույժ	3	80000
45	Բանվոր	3.5	80000
46	Գործավար	1	80000
47	Հավաքարար	5.6	80000
48	Ջրակարգավորող	4.5	80000
49	Ջրակարգավորող	0.6	90000
50	Պահակ	1	80000
Ընդամենը		**66**	**8176000**

Եղեգիսի համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան

Հավելված 2
ՀՀ Վայոց ձորի մարզի

Եղեգիս համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 14---ի N 28 Ա որոշման

1.ՈՒԺը կորցրած ճանաչել Շատին համայնքի ավագանու 23/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 5 Ա որոշումը:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Արտաբույնք համայնքի ավագանու 19/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 5 Ա որոշումը:

3.ՈՒԺը կորցրած ճանաչել Հորբատեղ համայնքի ավագանու 19/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 3 Ա որոշումը:

4.ՈՒԺը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 02/12/2016թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 20 Ա որոշումը:

5.ՈՒԺը կորցրած ճանաչել Գողթանիկ համայնքի ավագանու 18/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 5 Ա որոշումը:

6.ՈՒԺը կորցրած ճանաչել Հերմոն համայնքի ավագանու 23/12/2016 թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 34 Ա որոշումը:

7.ՈՒԺը կորցրած ճանաչել Վարդահովիտ համայնքի ավագանու 17/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 5 Ա որոշումը:

8.ՈՒԺը կորցրած ճանաչել Աղնջաձոր համայնքի ավագանու 26/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 5 Ա որոշումը:

9.ՈՒԺը կորցրած ճանաչել Հորս համայնքի ավագանու 17/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 4 Ա որոշումը:

10.ՈՒԺը կորցրած ճանաչել Սալլի համայնքի ավագանու 30/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 6 Ա որոշումը:

11.ՈՒԺը կորցրած ճանաչել Քարագլուխ համայնքի ավագանու 20/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 4 Ա որոշումը:

12.ՈՒԺը կորցրած ճանաչել Թառաթումբ համայնքի ավագանու 27/01/2017թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 4 Ա որոշումը:

Համայնքի ղեկավար Ա. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14դեկտեմբերի 2017 թվականի N29Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԼՈՒ ՄԱՍԻՆ» 17/11/2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 26Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 6-րդ մասի պահանջներով՝

Եղեգիս համայնքի ավագանին որոշում է՝

1. Եղեգիս համայնքի ավագանու 17/11/2017թ. թիվ 26Ն որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա/ ենթակետով

Եղեգիս համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Եղեգիս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 1-ի:
2. 2.ՈՒժը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի նախկին ավագանիների որոշումները՝ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին, համաձայն սույն որոշման կից հավելված 2-ի:»:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզիեղեգիս համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 14 -ի N 29Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.

2) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը.

3) համայնքի հանրակրթական դպրոց(ներ)ի գործունեության աջակցումը.

4) զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.

6) միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

2) աջակցություն են ցուցաբերում միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի վճարման կազմակերպմանը.

3) նպաստում են համայնքի հանրակրթական դպրոց(ներ)ի գործունեության կազմակերպմանը.

4) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների -- -%-ը:

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքերում:

6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը (այսուհետ՝ նախաձեռնող) համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

10. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

11. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

12. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13.Համայնքի ավագանին զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական

խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14.Համայնքի սոցիալապես անապահով բնակչի հուղարկավորության կազմակերպման համար օգնության տրամադրման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ նրա ընտանիքին հատկացնել -- մինչև հազար դրամի սոցիալական օգնություն և այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանու առաջիկա նիստում, որը ավագանու կողմից ընդունվում է որպես ի գիտություն:

15. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ավագանին կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

16.Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

17. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1) համայնքի բնակիչ հանդիսանալը.

2) սոցիալապես անապահով ընտանիք հանդիսանալու վերաբերյալ սոցիալական օգնության տրամադրման մշտական գործող հանձնաժողովի դրական եզրակացությունը.

3) համայնքի բնակիչ հանդիսանալը. սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը.

4) համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն չվարելը:

18. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է ---- հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

19. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի 50%-ի չափով: Ուսման վարձի հատկացում չի արվում համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:

20.Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում եմ միայն ավագանու որոշմամբ :

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N30Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով

Եղեգիս համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից առաջարկվող վերաբաշխումներին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Եղեգիս համայնքում ընդգրկված բնակավայրերի բյուջեներում կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1.Շատին բնակավայրի բյուջեում՝

Պակասեցնել՝ 3478,6 հազար դրամ

10.04.01 ,, Մայրության նպաստի վճարում'' գործառնական դասակարգման 4729 ,,Նպաստներ բյուջեից'' հոդվածից 740,0 հազար դրամ,

10,09,01 ,,Սոցիալական օգնություն'' գործառնական դասակարգման 4729 ,,Նպաստներ բյուջեից'' հոդվածից 388,2 հազար դրամ,

04.05.01 ,,Ճանապարհային տրանսպորտ'' գործառնական դասակարգման 4216 ,,Գույքի և սարքավորումների վարձակալություն'' հոդվածից 258.4 հազար դրամ, 4251 ,,Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում'' հոդվածից 171.8 հազար դրամ, 4264 ,,Տրանսպորտային նյութեր''հոդվածից 200.0 հազար դրամ,

06.03.01. ,,Ջրամատակարարում'' գործառնական դասակարգման 4241 Մասնագիտական ծառայություններ'' հոդվածից 170,0 հազար դրամ, 4251 ,,Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում'' հոդվածից 200.0 հազար դրամ,

05.06.01 ,,Շրջակա միջավայրի պահպանություն'' գործառնական դասակարգման 4241 Մասնագիտական ծառայություններ'' հոդվածից 100,0 հազար դրամ,

04.02.04 ,,Ոռոգման ցանցի կառուցում'' գործառնական դասակարգման 4251 ,,Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում'' հոդվածից 265.0 հազար դրամ,

01.01.01 ,,Կառավարման մարմնի պահպանում'' գործառնական դասակարգման 4239 ,,Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածից 335.2 հազար դրամ, 4252 ,, Սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում'' հոդվածից 150.0 հազար դրամ, 4261 ,,Գրասենյակային ապրանքներ և նյութեր'' հոդվածից 50.0 հազար դրամ, 4267 ,,Կենցաղային և հանրային սննդի նյութեր'' հոդվածից 50.0 հազար դրամ, 4269 ,,Հատուկ նպատակային նյութեր'' հոդվածից 400.0 հազար դրամ:

Համապատասխանաբար ավելացնել 3478,6

01.01.01 **,,Կառավարման մարմնի պահպանում''** գործառնական դասակարգման ,,Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ'' հոդվածին 2028.6 հազար դրամ, 4212 ,,Էներգետիկ ծառայություններ'' հոդվածին 500,0 հազար դրամ:

06.01.01 **,,Բնակարանային շինարարություն''** գործառնական դասակարգման 4657 ''Այլ ընթացիկ դրամաշնորհներ'' հոդվածին 950.0 հազար դրամ:

2.Թառաթումբ բնակավայրի բյուջեի գործառնական դասակարգման 01.1.1- **,,Կառավարման մարմնի պահպանում''** ոլորտի 4112- <<աշխատողների պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարումներ>> հոդվածից պակասեցնել 465,0 հազար դրամ և ավելացնել 01.1.1-**,,Կառավարման մարմնի պահպանում''** ոլորտի 4111-աշխատողների աշխատավարձեր և հավելավճարների հոդվածին:

3.Հորս բնակավայրի գործառնական դասակարգման 06.4.1-փողոցների լուսավորման ոլորտի 4269-հատուկ նպատակային նյութեր հոդվածից պակասեցնել 500.0 հազար դրամ և ավելացնել 01.1.1 **,,Կառավարման մարմնի պահպանում''** ոլորտի 4111-աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածին:

4.Հերմոն բնակավայրի բյուջեի գործառնական դասակարգման 01.1.1 <<կառավարման մարմնի պահպանում>> ոլորտի 4267 <<կենցաղային և հանրային նյութեր>> հոդվածից պակասեցնել 100 հազար դրամ և համապատասխանաբար ավելացնել 01.1.1 <<կառավարման մարմնի պահպանում>> ոլորտի 4111 <<աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածին:

Եղեգիս համայնքում ընդգրկված հետևյալ բնակավայրերի ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումները՝

5.Վարդահովիտի բյուջեի եկամտային մասին ավելացնել հողի օտարում 980.0 հազար դրամի չափով և ծախսային մասով համապատասխան ուղղելով գործառնական դասակարգման Շատինի 06.4.1 արտաքին լուսավորման ցանցի 5113 –շենքի և շինությունների կապիտալ վերանորոգման հոդվածին:

6.Աղնջաձոր համայնքի գործառնական դասակարգման 08.2.4-այլ մշակութային կազմակերպություններ ոլորտի 4269-հատուկ նպատակային նյութեր հոդվածից պակասեցնել 260.000 դրամ և ավելացնել 01.1.1 օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ոլորտի 4111-աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածին:

Համայնքի ղեկավար Ա.Ատեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N31 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,01738 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2011թ. թիվ 1918-Ն որոշումը «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.01.2001թ. թիվ 30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 01/12/2017թ. թիվ 149 դրական եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.01738 հա այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր 10-035-0254-0026/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտներ գործառնական նշանակության, նոր քլորակայանի կառուցման և սպասարկման համար:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ